Օրակարգ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզխորհրդի նիստի

22.06.2010թ. ք. Կապան

1. Մարզի համայնքների կողմից 2010 թվականի բյուջեների սեփական եկամուտների ընթացիկ հավաքագրման և ՏԻՄ-երի խնդիրների մասին:
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Մարդյան/

2. Տեղեկատվություն-իրազեկում ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխման կարգի մասին:
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մ. Կոստանդյան /

3. Մեղրի քաղաքային համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի, առաջիկա ծրագրերի և հիմնախնդիրների մասին:
/Զեկուցող՝ Մեղրիի քաղաքապետ Ս. Հայրապետյան/

4. Ագարակ քաղաքային համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի, առաջիկա ծրագրերի և հիմնախնդիրների մասին:
/Զեկուցող՝ Ագարակի քաղաքապետ Մ. Զաքարյան/

5. Մեղրիի տարածաշրջանի համայնքներում ոռոգման ջրամատակարարման ապահովման ուղղությամբ կատարվող աշխատանքների ընթացքի և առկա խնդիրների մասին:
/ Զեկուցող՝ Մեղրիի ՋՕԸ-ի խորհրդի նախագահ Ա. Հովհաննիսյան /

6. Մեղրիի տարածաշրջանում հասարակական կարգի պահպանման ուղղությամբ կատարված աշխատանքների և խնդիրների մասին:
/ Զեկուցող՝ ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ոստիկանության Մեղրիի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ Ա. Պողոսյան /

Աշխատակարգ
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզխորհրդի նիստի

22 հունիսի 2010թ. ք. Կապան

Մարզխորհրդի նիստի հարգելի մասնակիցներ, մարզխորհրդի նիստի աշխատաքներին մասնակցում են՝

- մարզխորհրդի անդամներ,
- մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ,
- հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ,
- զանգվածային լրատվամիջոցների և հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մարզխորհրդի նիստի օրակարգը բաժանված է Զեզ.

Առաջարկվում է մարզխորհրդի նիստի հետևյալ աշխատակարգը

Օրակարգի առաջին հարցի զեկուցման համար մինչև	15 րոպե
Օրակարգի մնացած հարցերի համար մինչև	10 րոպե
Ելույթների համար մինչև	5 րոպե
Հայտարարությունների համար մինչև	3 րոպե

Առաջարկում եմ մարզխորհրդի նիստի աշխատաններն ավարտել մեկ նիստով

Օրակարգի առաջին հարցի զեկուցման համար խոսքը տրվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Աշոտ Մարդյանին:

Ելույթների համար խնդրում եմ հերթագրվել

Հարցեր զեկուցողին
Առաջարկում եմ լսել նաև օրակարգի մնացած հարցերը և անցնել մտքերի փոխանակմանը:

Օրակարգի երկրորդ հարցի զեկուցման համար խոսքը տրվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մուշեղ Կոստանդյանին:

Օրակարգի երրորդ հարցի զեկուցման համար խոսքը տրվում է Մեղրի քաղաքային համայնքի ղեկավար Սերգեյ Հայրապետյանին:

Օրակարգի չորրորդ հարցի զեկուցման համար խոսքը տրվում է Ազարակ քաղաքային համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանին:

Օրակարգի հինգերորդ հարցի զեկուցման համար խոսքը տրվում է Մեղրիի ՋՕԸ-ի խորհրդի նախագահ Ա. Հովհաննիսյանին:

Օրակարգի վեցերորդ հարցի զեկուցման համար խոսքը տրվում է ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ոստիկանության Մեղրիի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ Ա. Պողոսյանին:

Ելույթի համար խոսքը տրվում է
1.Շրվենանց գյուղական համայնքի ղեկավար Արմինե Մանուկյանին
2. Տոլորսի գյուղական համայնքի ղեկավար Մարատ Առաքելյանին

Հայտարարությունների համար խոսքը տրվում է

1.

2.

Մարզխորհրդի նիստում քննարկված հարցերը և ընթացիկ տարում մարզպետարանի անելիքներն ամփոփելու համար խոսքը տրվում է ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանին:

Օրակարգի հարցերը սպառված են

Մարզխորհրդի նիստի աշխատանքները հայտարարում եմ ավարտված:

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 2

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

22 հունիսի 2010թ. ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ղեկավարներ, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ Տիգրան Խաչիկյանը:

Օ ր ա կ ա ր գ ռ ւ մ՝

1. Մարզի համայնքների կողմից 2010 թվականի բյուջեների սեփական եկամուտների ընթացիկ հավաքագրման և ՏԻՄ-երի խնդիրների մասին:
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Մարդյան/

2. Տեղեկատվություն-իրազեկում ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխման կարգի մասին:
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մ. Կոստանդյան /

3. Մեղրի քաղաքային համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի, առաջիկա ծրագրերի և հիմնախնդիրների մասին:
/Զեկուցող՝ Մեղրիի քաղաքապետ Ս. Հայրապետյան/

4. Ագարակ քաղաքային համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի, առաջիկա ծրագրերի և հիմնախնդիրների մասին:
/Զեկուցող՝ Ագարակի քաղաքապետ Մ. Զաքարյան/

5. Մեղրիի տարածաշրջանի համայնքներում ոռոգման ջրամատակարարման ապահովման ուղղությամբ կատարվող աշխատանքների ընթացքի և առկա խնդիրների մասին:
/ Զեկուցող՝ Մեղրիի ՋՕԸ-ի խորհրդի նախագահ Ա. Հովհաննիսյան /

6. Մեղրիի տարածաշրջանում հասարակական կարգի պահպանման ուղղությամբ կատարված աշխատանքների և խնդիրների մասին:
/ Զեկուցող՝ ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ոստիկանության Մեղրիի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ Ա. Պողոսյան /

7. Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2009-2010 ուստարվա ավարտական քննությունների նախնական արդյունքների մասին տեղեկատվություն:
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Լ. Հարությունյան/

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ <<Մարզի համայնքների կողմից 2010 թվականի բյուջեների սեփական եկամուտների ընթացիկ հավաքագրման և ՏԻՄ-երի խնդիրների մասին>> զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Աշոտ Մարդյանը:

Օրակարգի երկրորդ՝ <<Տեղեկատվություն-իրազեկում ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխման կարգի մասին>> զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մուշեղ Կոստանդյանը:

Օրակարգի երրորդ՝ <<Մեղրի քաղաքային համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի, առաջիկա ծրագրերի և հիմնախնդիրների մասին>> զեկուցումով հանդես եկավ Մեղրի քաղաքային համայնքի ղեկավար Սերգեյ Հայրապետյանը:

Օրակարգի չորրորդ՝ <<Ագարակ քաղաքային համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի, առաջիկա ծրագրերի և հիմնախնդիրների մասին>> զեկուցումով հանդես եկավ Ագարակ համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանը:

Օրակարգի հինգերորդ՝ <<Մեղրիի տարածաշրջանի համայնքներում ոռոգման ջրամատակարարման ապահովման ուղղությամբ կատարվող աշխատանքների ընթացքի և առկա խնդիրների մասին>> զեկուցումով հանդես եկավ Մեղրիի ՋՕԸ-ի խորհրդի նախագահ Ալիկ Հովհաննիսյանը:

Օրակարգի վեցերորդ՝ <<Մեղրիի տարածաշրջանում հասարակական կարգի պահպանման ուղղությամբ կատարված աշխատանքների և խնդիրների մասին զեկուցումով հանդես եկավ ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ոստիկանության Մեղրիի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ Ավետիկ Պողոսյանը:

Օրակարգի յոթերորդ՝ <<Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2009-2010 ուստարվա ավարտական քննությունների նախնական արդյունքների մասին>>տեղեկատվությամբ հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Լյուդվիգ Հարությունյանը:

Զեկուցումների շուրջ ելույթներով հանդես եկան Շրվենանց գյուղական համայնքի ղեկավար Արմինե Մանուկյանը և Տոլորս գյուղական համայնքի ղեկավար Մարատ Առաքելյանը: /Կցվում են զեկուցումներն ու ելույթները/:

Հարցադրումներով հանդես եկան Բռնակոթ գյուղական համայնքի ղեկավար Ատոմ Առաքելյանը, Տեղ գյուղական համայնքի ղեկավար Սաղաթել Գալստյանը, Կորնիձոր գյուղական համայնքի ղեկավար Սուրեն Սիմոնյանը և ուրիշներ:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյան